


1A-8550.



ԽՈՍՔ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Դարեր շարունակ, կարավաններ շարանշարան, Հայաստանի մայր երկրեն ճամբա ելան դեպի հուսիս, արևմուտք և դեպի արեւելք: Անողորմ ճակատագրե մը խարազանւած, հալ շինականները ճամբա ելան խուճապահար, այլուր որոնելու համար կյանքի և ինչքի ապահովություն, խղճի ազատություն և աշխատելու ու ստեղծագործելու հնարավորություն: Հալ հուսահատ բազմությունները, լքելով իրենց պապերուն սուրբ հողերը, հյուրընկալ ափեր փնտրեցին, հոն հաստատելով իրենց հավատքի ու կյանքի օժերուն լաստերը:

Եվ տակալն, հակառակ իր մայր հողեն դառնելով կտրված ղլգլուն, հակառակ հաճախակի փոթորկայից դեպքերուն և օտար միջավայրի հարստեւ ազդեցութեանց, մեր հալ գաղութները իրենց հոգիին խորանին մեջ միշտ վատ պահեցին մար հայրենիքի և ս. Էջմիածնի սրբազան ճրագը:

Պատմությունը մեզի կտրվեցնե, թե այն ժողովուրդները, որոնք ռամանաւոյս եղան և մար երեւի ու ս. Էջմիածնի հետ իրենց կապը կտրեցին, անոնք շուտով տարրալուծվե-

ցան ու կորան, և իբր հետք՝ ցանցաւ հիշատակներ միայն ձգեցին պատմութեան մեջ:


Մասնավորապէս թրքահալ մոր գաղութականությունը, անոր գավակներն ու թոռները, միշտ հարազատորեն իրենցը նկատեցին ու կենտեն հալ հայրենիքը և ս. Էջմիածինը. իրենցը նկատեցին ու կենտեն այն երիտասարդ հանրապետությունը, որ հախող պատերազմի արհավիրքներեն և մոխիրներեն վերածնալ ու հասակ նետեց սովետական փրկագործ դրոշին տակ:


Եվ չէր կրնար տարրեր ոլլալ:

Ժողովուրդ մը, որ մոտ երեք հազար տարիներու պատմութեան մը ժառանգորդն է, ժողովուրդ մը, որ երկու հազար տարիներու հավատք մը և կազմակերպւած եկեղեցի մը ունի. ժողովուրդ մը, որ եվրոպական իմաստով կատարելութեան բառմունքները հասնող մշակութաւին արծեքներ ստեղծած է. ժողովուրդ մը, որ աշխատելու և աղոյւնաբերելու անապատ ուժ և կոտով ունի. ժողովուրդ մը, որ ին հայրենիքի ազատութեան համար զոհաբերութեան և հերոսութեան աննման էջեր գրած է իր աստմութեան ընթացքին. ժողովուրդ մը, որ կոտենե, թե աւստ մերաշինմող ու ծառկող հայրենիք մը ունի՝ աօտ, շեն ու ապահով, աղախիւ ժողովուրդի մը ժամակները չէին կրնատ մոռնալ և չէին մոռնած մար ժողովուրդը, իրենց մար հայրենիքը:

Ահա թե ինչու, այսօր բոլոր գաղութահա-

* Քաղվածաբար ներկայացնում ենք տ. Վազգեն վրդ. Պաճյանի՝ այժմ Ամենայն Հայոց Հայրապետի, 1945 թ. գրած և Բոխարեստում տպագրւած «Եւրոպ հայրենիքի մասին» գրքից հետևյալ հայրենասիրական խորհրդածությունները:





Երևան. Լենինի անվան պողոտան

յերը, ինչ հասակի ալ ըլլան, ինչ ընկերային դիրքի ալ պատկանին, ինչ մտավորական մակարդակ ալ ունենան, այժմու վերածնած Հայաստանը իրենց հարազատ հայրենիքը կնկատեն, կսիրեն զայն, կգորգորան անոր վրա և ըստ այնմ կատաշնորդեն իրենց բայ-լերը՝ ըլլա անհատական, ըլլա մանավանդ հավաքական կյանքի միջ:

Կաղութահատուն հայրենասիրությունը ճշմարիտ է, անկեղծ է և խորապես ուժգին: Երկյուղածությամբ և հավատքով մոտե-նանք գաղութահատուն ադ ամենն արքա-զան զգացումին:

Հայրենաքաղաքությունը, հույսն ու հավատ-քը, մեր ազգի վերածնունդին, որ սերունդե-սերունդ փոխանցվեցան գաղութահայ օ-ճախներուն և հոգիներուն, հայրենասիրու-թյան զգացումը, որ միշտ խլրտեցավ բոլոր հայերու արյան մեջ, այսօր, նոր պայմաննե-րու ստեղծումով, այդ բոլոր ազնիվ զգացում-ները կհորդին, կողողեն մեր հոգիները և բոլոր ճշմարիտ հայերուն մեջ կստեղծեն լուսավոր, պայծառ ու վճռական հայկական գաղութահայություն մը:

Ոչ մեկ գաղութահայ տարբեր չի կրնար զգալ ու մտածել: Այլևս ոչ մեկ սխալ տեսու-ղության մը հնարավորությունը գոյություն ունի և չի կրնար գոյություն ունենալ:

Հայրենասիրական զգացումով լուսավոր-ված՝ ամբողջ գաղութահայությունը ի մի ձուլ-ված է, առաջնորդված ըլլալով իր ազգային շահերուն հատակ գիտակցությամբ:

Կա մեկ հայ ժողովուրդ, կա մեկ հայ հայ-րենիք, կա մեկ ճակատագիր, հետևաբար կա մեկ կամեցողություն և գործելու մեկ ուղյու-թյուն:

Մեր բոլոր ճամփաները դեպի Երևան կը-տանին. դեպի մեր սիրելի Երևանը. դեպի մեր մայր Հայաստանի ծաղիկ մայրաքաղա-քը:

Ժամանակ է, որ բոլոր հայերը անխտիր՝ վերջնականապես մոռնան իրենց հիննե մնացած քեներն ու անհասկացողություննե-րը և եղբայրացած արտերով, ձեռք-ձեռքի տված նվիրվին հայրենաշեն վսեմ գործին:

Հայոց շարքերուն մեջ եթե պատահի իսկ, որ մեկը կամ մյուսը տկարություն մը կամ ակամա սալաքում մը ունենա, թող մյուս եղբայրները անոր ձեռքը չթողուն, այլ փոր-ձեն զայն վերցնել՝ մոլորած մը փրկելու և ազգին համար աշխատող ուժ մը շահելու նպատակով:

Ընկերային կյանքի մեջ փոխադարձ սերը հավաքական շահու գիտակցությունն է կճնի: Ով որ անկեղծորեն հայրենասեր է և ճշմար-տապես կդավանի ժողովուրդի և հայրենիքի շահերուն սկզբունքը, ան մեկ կողմ դրած իր

եսը, կհպատակի նվիրական **մենքի** օրեն-քին:

Այդպիսի մը չի կրնար չսիրել իր ընկերը, իր հայրենակիցը, իր ազգակիցը, ան չի կր-նար մերժել համախմբումը բոլոր կենդանի ուժերուն. գործակցությունը և եղբայրությու-նը բոլոր անոնց, որոնք մաքուր ձեռքերով կու գան շարքերը խտացնելու, միացյալ հի-



Մի տեսարան Արարատյան դաշտավայրից

զերով ժողովրդանվեր գործը ի կատար ա-ծելու նպատակով:


Ժամանակ է, որ գաղութահայությունը, հայրենասիրական լրիվ գիտակցությամբ, հոգեպես ազատագրված անցյալի հուսա-լքումներեն, շփոթ ու անորոշ կեցվածքնե-րեն, հակառակն ապրումներեն, այսօրվան իրականության պայծառ լույսին առջև, դեմ-հանդիման կանգնի իր կենդանի հարեցի-քին և իր աչքերը անոր հառած՝ գտնե իր ճշմարիտ ուղին: Ամենքս անխտիր լսենք հրավերը հայրենյաց ու հետևի՛ք անոր:

Հիրավի, գաղութահայն ալ ընելիքներ ու-նի իր հայրենիքին համար:

Ադ ընելիքներն ստաջիքն անոր հայրե-նասիրական կեցվածքն է: Այսօր ավելի քան **երբեք** անհրաժեշտ է դրական հայրենասի-րություն մը ի հայտ բերել դեպի մեր մայր երկիրը և առհասարակ դեպի Սովետական Միությունը, որ մեր ժողովրդին հզորագույն պահապանն ու հովանին է, որպիսին հայ ժողովուրդը դուրսն է երբեք չէ ունեցած իր պատմության ամբողջ տևողության ընթաց-քին: Բոլոր հայերս լավ ըմբռնենք այս ճշ-մարտությունը և գիտակից սիրով, եռանդով ու երախտագիտության զգացումով նորոգ-

ված՝ փարինք մեր նոր հայրենիքին, հաղորդակից ըլլանք անոր հետ, ներշնչվինք անոր ոգիեն և մեր նոր սերունդները այդ հայրենիքին ջահակիրները դարձնենք, ստեղծելով այստեղ, գաղութներու մեջ, ճշմարիտ ու իրապաշտ հայրենասիրության մը մթնոլորտը:

Հետ այսու գաղութահայությունը կյանք պիտի առնէ մայր հայրենիքեն և կյանք պիտի տա անոր:



«Զվարթնոց» (Ե. Բոշար)

Մեր երկրորդ պարտականությունն է օժանդակել և օգնել մեր երկրի վերաշինության գործին:

Հայրենիքի վերաշինության, անոր արդյունաբերական միջոցներու զորացման և առհասարակ տնտեսական ու մշակութային զարգացման տեսակետով, ամեն մեկ գաղութահայ, իր նպաստը կրնա բերել, հոգ չէ թե համեստ չափով, որպես դրական ապացույց իր իրական հայրենասիրության:

Երկար դարերն է վեր առաջին անգամն է, որ հայը իր պատմական հայրենիքին մեջ բանի մը տասնյակ տարիներն է վեր առնողը ու ապահով կյանք մը կապրի ու լայն հնարավորություններ գտած է նվիրվելու համար երկրի վերաշինության գործին, հրակայաբայ հառաջընթացով:

Մեր անցյալը լեցուն է դառն փորձություններով ու անվերջ նահատակություններով:

Դարեր շարունակ, հայ ժողովուրդի և անոր հետ միատեղ բնակող կամ դրացի ապրող ժողովուրդներու միջև չտիրեցին փոխադարձ համդուրժողականության ոգին և փոխադարձ շահերու գիտակցությունը:

Միատեղ և կամ կողք-կողքի ապրող ժողովուրդներ, փոխանակ միասին ողջունելու ամեն ծագող առավիտ, փոխանակ եղբայրորեն մշակելու Աստուծո՛ւն իրենց պարգևված հողը, փոխանակ միասին վայելելու անոր բարիքները, անոնք գիրար ստեղծին: Դարեր ու տարի անվերջ հայ շինականը շահագործվեցավ, հալածվեցավ և նահատակվեցավ:

Այդ բոլորին վրա ավեցան 19-րդ դարու դրամատիրական մեծ պետություններու աշխարհակալական ձգտումները, և, հետևապես, ազա՛ն մրցակցությունը անոնց միջև՝ տնտեսական ու քաղաքական գեղեցիկ վրա:

Այդ մրցակից մեծ պետություններու աչքին փոքր ժողովուրդները լոկ հում նյութեր էին և երկիրները՝ շուկաներ՝ իրենց ճարտարարվեստի արտադրությանց սպառումին համար և կամ աշխարհակալական իրենց ձրգտումներուն ճանապարհին:

«Աչքերս դարձուցի դեպի Եվրոպա: Անիկա գլխուն վրա կկրեն քաղաքակրթության լուսապսակը, ձեռքն ուներ ջահ մը ու բերանը կհեղեղեր՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն բառերը: Կարծեցի թե իմ և իմ եղբայրներուս փրկության հրեշտակը պիտի ըլլա ան. բայց ի՞նչ հուսախաբություն: Անիկա դահիճներուն հետ եղբայրացավ, որոնք բավական հարուստ էին իր թափը յուղոտելու համար, և անգոսնեց զոհերը, որոնք շատ աղքատ էին հազեցնելու համար իր ընչաքաղցությունը», — կըսեր անցյալ դարու վերջերուն պոլսահայ մեծանուն գործիչ Մինաս Չերազը, որ իր ժամանակին հայկական դատին համար աշխատած էր, ի զո՛ւր օգնություն հայցելով «քաղաքակիրթ» ու «քրիստոնյա» արևմուտքեն:

Հայ ժողովուրդը, միամիտ և անփորձ, սխալ տեսողությունը ունեցավ հավատալու, թե ապրանք ծախելու և հում նյութ ճարելու համար եկած մեծ պետությունները, որոնք միշտ քրիստոնեության և քաղաքակրթության անուճով կխոսեին, պիտի իրականացնեն Հայաստանի ապահովությունը, բարօրությունը և նույնիսկ ազատ ինքնավարությունը:

Սակայն այդ բոլոր ազդակները, այդ բոլոր «քարեկամությունները», որոնք իբր թե մեր ժողովուրդի կենդանության և ազատության աղբյուրները պիտի հանդիսանային, ընդհակառակը, նորանոր փորձություններու, նորանոր աղետներու պատճառ դարձան:

Մեկ կողմեն համաբնակ ժողովուրդներու

հետադիմությունը, նախապաշարումները և տիրող բռնապետական կարգերը, մյուս կողմից՝ դրամատիկական մեծ պետություններու իրացվելությունը և անոնց դիվանագիտական դավերը, հայ ժողովուրդը հասցուցին անդունդին եզերքը ու հալոց աշխարհը վերածեցին իսկական դժոխքի մը:

Վերջին պահուն էր, որ հայ ժողովուրդը ազատեցավ վերջնական բնաջնջումից մը: Ազատեցավ շնորհիվ իր ապրելու հավատքին, իր տոկալու ուժին, իր հերոսական պայքարին, բայց նաև շնորհիվ ռուս ժողովուրդի փրկագործ օգնությանը և ընկերակարական հեղափոխության պատմության բեմին վրա բերած նոր ոգիին:

Այդ հեղափոխության ոգին էր, որ առաջին անգամը ըլլալով հռչակեց և իրագործեց կոտակը, թե մարդը մարդուն հավասար է և ժողովուրդը ժողովուրդին՝ եղբայր:

Եվ մենք տեսանք ու կտեսնենք այդ ոգիին ստեղծած բարիքները մեր ժողովուրդի կյանքին մեջ: Մենք կտեսնենք մանավանդ այսօր այդ ոգիին անխորտակելի ուժը և լուսանաճանշ փառքը:

Մեր այս մտածումներն ու խոսքերը չենք ուզեր, որ պարզ փառաբանական արտահայտություններ նկատվին:

Ով որ ծանոթ է մեր պատմության, ով որ ծանոթ է մեր տխուր և փոթորկալից մոտավոր անցյալին, ան պետք է գիտնա, թե մեր այսօրը իրական վերածնունդ մըն է:

Բոլոր համաշխարհային իրադարձությանց մեջ, ամեն ժողովուրդ իր բախտը կփնտրե, իր շահը կհետապնդէ ու կձգտի իր սեփական կյանքի գորացման ու զարգացման ազդակները ապահովել:

Վերջին երեսուն տարվան ընթացքին մեզի համար այդպիսի ազդակներ եղան՝ ռուսական Սեփ հեղափոխությունը և վերջին համաշխարհային պատերազմի երջանիկ հաղթանակն փախճալը:

Մեր ժողովուրդն այ օրերի կանգնեցավ և իր կենսական շահերու գիտակցությամբ կերտեց իր նոր ճակատագիրը, իր նոր հայրենիքը, հալիտենական Հայաստանը նոր պայմաններու մեջ:

Այդ հիշտ և պաշտօն գիտակցությամբ է, որ հայ ժողովուրդը Սեփ հեղափոխության հարեցավ և մասնակից եղավ այդ համամարդկային շարժումին՝ Ծափունյանի և Մյասնիկյանի նման նշանավոր դեմքերով:

Եվ այդ նույն գիտակցությամբ է, որ մեր օրերուն Հայաստանի զավակները կոպի դաշտերուն վրա իրենց արյան տուրքը տվին, առանց սակարկելու, որպեսզի իրենց սովետական հայրենիքի դրոշը կանգուն մնա և իրենց կյանքի իդեալը՝ անասան:

Սեփ հաղթանակը հայ ժողովուրդի այ պատմության անփվր դեպի հառաջ շարժեց՝ դեպի կենդանություն, դեպի ապագա վերելք և ծաղկում:

Սեր տխուր անցյալը այլևս պատմության կպատկանի վերջնականապես, անդառնալիորեն: Այսօր հայ ժողովուրդը ո՛չ աղքատ է,



Սղբեր-հուշարձան

ո՛չ տկար է և ո՛չ այ միմակ: Այս մխիթարիչ իրողությունը հայր կզգա մանավանդ հայ հողին վրա, Սովետական Հայաստանի մեջ: Արտասահմանի հայերը մի անգամ ընդմիշտ պետք է լավ գիտնան, թե միայն սովետական իշխանությունն ու միայն ռուս ժողովուրդն են գերագույն գրավականները մեր սզգի ասրահության, մեր հայրենիքի վերաշինության և խաղաղ առաջադիմության, հայ ժողովուրդի ոսկի ապագային իրականացման:

Հայրենի ապահովությունն ու խաղաղությունը մեզի համար վեր է քան ամեն ճշմարտություն: Մեր հայրենիքի խաղաղությունն ու ապահովությունը մեզի հայերու համար համագումարն է բոլոր ճշմարտություններու:

Երեկո մը, Էջմիածնեն վերադարձին, մեր օթոները առաջացան Արուսյան պողոտայեն դեպի վեր: Բարձրացանք Սևանա լիճ տանող սաֆայտապատ օձապտույտ ճամփով և հասանք մոնումենտ-քանդակին մոտ, որուն

ստորոտը կտարածվի ամբողջ Երևանը: Գիշեր էր: Բարձունքեն կղիտեինք Երևանը: Կախարդված էինք բոլորս ի տես այն հոգեզմայլ տեսարանին, որ կբացվեր մեր աչքերուն առաջ:

Երևանը լույսերու մեջ, ծով լույսերու մեջ կշողար, անծայրածիր տարածության մը վրա, մինչև հորիզոնները հեռավոր: Լույսերու ալիքները կբարձրանային մինչև երկինք: Երկնակամարի աստղերն ալ անհունին մեջ,

կարծես ցոլացումը ըլլային Արարատյան դաշտի վառ լույսերուն:

Քաղցր, անանուն հուզումներ հորձանահոս կողողեին մեր հայտ հոգիները, մեր պանդուխտ հայտ հոգիները: Սրտատրոփ ու լուռ, երկար մնացինք հոն ու հափշտակված դիտեցինք առանց հագեցնալու: Ժամանակը կանգ էր առած այդ գիշեր...

Հոգվույս մեջ ձայն մը ծիլ արձակած, մեր Ծարակնոցեն կերգեր՝ «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

